

**ՁԵԿՈՒՅՑ**  
**LQFS**  
**ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՊ**  
**ԱՏԵԼՈՒԹՅԱՆ**  
**ԽՈՍՔԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ**  
**ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆ ԱՌՑԱՆՑ**  
**ՀԱՐԹԱԿՈՒՄ**

ՀԱՅԱՍՏԱՆ,  
ԵՐԵՎԱՆ 2021թ.

ՆՈՐ ՍԵՐՈՂԻ  
NEW GENERATION



© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն  
Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ  
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:

Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2022թ.



## **ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԶԱՆԴԵՊ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆ ԱՌՑԱՆՑ ԶԱՐԹԱԿՈՒՄ**

Սույն վերլուծությունը ստեղծվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ԶԿ-ի կողմից Նորվեգիայի Զելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Վերլուծության բովանդակության համար պատասխանատու է «Նոր Սերունդ» Մարդասիրական ԶԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Նորվեգիայի Զելսինկյան Կոմիտեի տեսակետները:

Յեղիակ՝  
Շուշան Խնկոյան

Դիտարկեց՝ Սերգեյ Գաբրիլյանը

Դիզայնը՝ Լևոն Չիլինգարյանի



## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ԱՆՀՐԱԺԵՃՏ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....</b>	<b>5</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>6</b>
<b>ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>7</b>
<b>ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ.....</b>	<b>8</b>
<b>ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ԵՎ ՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՏԱՐԱԾՈՂ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....</b>	<b>15</b>
<b>ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....</b>	<b>16</b>
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>20</b>
<b>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>22</b>



## ԱՆՅՐԱԺԵՇՏ ԶԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԶԱՊԱՎՈՒՄՆԵՐ

<b>ՅԿ</b>	Յայաստանի Յանրապետություն
<b>ԼԳԲՏ</b>	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
<b>ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ</b>	Մարդ, ում հոգեւոցիալական սեռը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին
<b>ՅԵՏԵՐՈՍԵՔՍՈՒԱԼ (ՏԱՐԱՍԵՌԱԿԱՆ)</b>	Մարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի հակառակ սեռի անձանց նկատմամբ
<b>ԶԼՄ</b>	Զանգվածային լրատվության միջոց
<b>ՅԿ</b>	Յասարակական կազմակերպություն
<b>ՆՍՅԿ</b>	«Նոր Սերունդ» Մարդասիրական ՅԿ



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում: ՆՍՀԿ-ն իր գործունեությունն իրականացնում է ելնելով մարդասիրական սկզբունքներից: ՆՍՀԿ-ի գործունեությունն ուղղված է մարդու իրավունքների պաշտպանությանը, առողջապահական ծառայությունների հասանելիությանը, հասարակության խոցելի խմբերի, կազմակերպությունների և ոչ ֆորմալ խմբերի հզորացմանը, բարեգործական աջակցության տրամադրմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Սահմանադրությամբ և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների կատարման աջակցմանը:

Խոցելի խմբերի, մասնավորապես ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը կազմում է Կազմակերպության գործունեության կարևորագույն օղակներից մեկը: Այն ներառում է անվճար իրավաբանական խորհրդատվություն, փաստաբանական աջակցություն և ներկայացուցչություն, շահերի պաշտպանություն, ռազմավարական դատավարություն, օրենսդրության վերլուծություն, իրավական ակտերի մշակում, օրենսդրական նախաձեռնություններ, իրավախախտումների, խտրականության դեպքերի փաստագրում, զեկույցների կազմում և ներկայացում և այլ գործառնություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խտրականության դրսևորումը ժամանակակից աշխարհում մեծապես դրսևորվում է նաև առցանց հարթակում, ինչպես նաև այն, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում խոցելի խմբերի թիրախավորման դեպքերը աճել են՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն սույն վերլուծությամբ կանդիդատառնա 2021թ.-ին առցանց հարթակում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության և ատելության դրսևորումներին՝ ներկայացնելով առավել աղմկահարույց միջադեպերը, ինչպես նաև ոլորտում առկա իրավական կարգավորումները:



## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրության մեթոդաբանությունն է առցանց տիրույթից՝ պաշտոնական կայքէջերից, պաշտոնական հրապարակումներից, սոցիալական ցանցերից (հատկապես՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցից), զանգվածային լրատվության միջոցներից և այլ կայքերից, դուրս բերել խտրական արտահայտություններ ու ատելության խոսքեր պարունակող հոդվածները, մեկնաբանությունները, արտահայտությունները և իրականացնել վերլուծություն՝ 2021թ.-ին առցանց հարթակում խտրականության դրսևորման վերաբերյալ, ինչպա նաև ուսումնասիրել օրենսդրական կարգավորումները:

## ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Սույն բաժնում ներկայացված է առցանց հարթակում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականություն և ատելության խոսք պարունակող առավել աղմկահարույց միջադեպերը, որոնք տեղի են ունեցել 2021թ-ի ընթացքում:

2021թ.-ը իրադարձություններով լի տարի էր: Պատերազմից հետո մի շարք շարժումներ սկսվեցին ՅՅ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով, որոնք շարունակվեցին մինչև 2021թ-ի ապրիլ ամիսը: Պատերազմից հետո առաջացած սահմանգծման հարցերն ավելի բորբոքեցին իրավիճակը: Համացանցը լի էր ատելության խոսք պարունակող տարբեր գրառումներով և տեսանյութերով: Օգտվելով առիթից՝ որոշ անձինք թիրախավորում էին նաև ԼԳԲՏ անձանց: Շատ քաղաքական և հանրային գործիչներ՝ մասնավորապես Նախորդ կառավարությանը աջակցող մարդիկ, օգտագործում են հակա-ԼԳԲՏ հռետորաբանություն՝ հաճախ ներկայացնելով ԼԳԲՏ մարդկանց որպես սպառնալիք ազգային անվտանգության համար:

2021թ-ի փետրվարի 20-ին հերթական բողոքի ակցիայի ժամանակ Չարեքթար գյուղի բնակիչ Աշոտ Սարյանը մեղադրեց գործող իշխանությանը երկիրը կառավարել չկարողանալու մեջ: Բողոքի ակցիայի ընթացքում Աշոտ Սարյանն ասել է. «Մի քանի գոմիկ եկել ու մեր հայ ազգի մտածելակերպը փոխում են, ոնց ուզում քշում են, հասկանում եք՝ ինչ է կատարվում: Ռևանշ պետք է լինի, սրանք պետք է գնան», - նշեց նա՝ հավելելով, որ գյուղապետ Արոն, որն իրեն Նախագահ է համարում, բայց անգամ տնային կառավարիչ չէ, իր թևի տակ մտած արդեն չգիտես ինչեր են անում (1).



(1) <https://www.pastinfo.am/hy/news/2021/02/20/a9ccdl7qu/1150078>



Տեղի ունեցած մի շարք բողոքի ակցիաներից հետո՝ 2021թ-ի մարտի 18-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց 2021թ-ի հունիսի 20-ի խորհրդարանական ընտրությունների մասին:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում թե՛ իշխող, թե՛ ընդդիմադիր կուսակցությունները քարոզարշավներ էին իրականացնում ՀՀ-ի տարբեր բնակավայրերում: Քարոզարշավներն ավելի բուռն էին ընթանում հիմնականում սահմանամերձ՝ Սյունիքի մարզում:

2021թ-ի ապրիլի 21-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Սյունիքի մարզ ուղեկցվել էր բողոքի ակցիաներով: Մի շարք համայնքի բնակիչներ փորձել են խոչընդոտել վարչապետի տեղաշարժը՝ պահանջելով հեռանալ: Բողոքի մասնակիցներից մեկն իր վրդովմունքն արտահայտելով վարչապետի նկատմամբ՝ իր խոսքում նշել է. «գոմիկներով հավաքվել իշխանություն եք սարքել, տղերքին ուզում եք կոտրե՞ք» (2). Տեսանյութը շատ արագ տարածվեց մի շարք լրատվամիջոցներով, սոցիալական տարբեր հարթակներով: Դրանից հետո մի շարք սոցիալական ցանցերում սկսեցին կրկին թիրախավորել ԼԳԲՏ անձանց:




(2) [https://yelaket.am/am/article/15900?fbclid=IwAR3M-MTBtAUz0ABLL-J6w3lvGT1NqSrSyxQ5JbQi-nmHksk2NsV2\\_VRRgek](https://yelaket.am/am/article/15900?fbclid=IwAR3M-MTBtAUz0ABLL-J6w3lvGT1NqSrSyxQ5JbQi-nmHksk2NsV2_VRRgek)

2021թ-ի հունիսի 17-ին նախընտրական քարոզարշավի ընթացքում վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանը կարճատև այց էր ունեցել Սյունիք մարզի Շումնուխ համայնք: Շումնուխ կատարած կարճատև այցի մասին Փաշինյանը կիսվել էր ֆեյսբուքյան իր էջում՝ շնորհակալություն հայտնելով շումնուխցիներին՝ «ջերմ» ընդունելության համար:

Մի շարք լրատվականներ՝ [hraparak.am](http://hraparak.am), [politik.am](http://politik.am) և այլն, Նյութեր տարածեցին, թե Փաշինյանին «ջերմ» ընդունելության արժանացնելու կազմակերպիչը և Փաշինյանի ակտիվ գրուցակիցը հայտնի շումնուխցի, ԼԳԲՏ ակտիվիստ Յայկ Յակոբյանի հայրն է՝ Գավրոշա Յակոբյանը (3).



Ամեն տարի հունիսի 1-ն ամբողջ աշխարհում նշվում է որպես երեխաների պաշտպանության միջազգային օր: Չնայած պատերազմի թողած արհավիրքներին՝ ՀՀ Կառավարությունը, այնուամենայնիվ, կազմակերպեց և իրականացրեց երեխաներին նվիրված միջոցառումներ: Երևան քաղաքի հրապարակում կազմակերպված



միջոցառման ժամանակ էկրաններին արտացոլված էր ծիածանի դրոշը, որոնք որոշ շրջանակի անձինք


ներկայացրին այնպես, իբր թե երեխաների պաշտպանության օրը Հանրապետության հրապարակում կազմակերպված միջոցառման ժամանակ ԼԳԲՏ համայնքի դրոշն են ցուցադրել, ինչի միջոցով ՀՀ վարչապետը փորձում է այդ համայնքի սատարումը ստանալ սպասվելիք արտահերթ խորհրդարանական ընտրություններում:

(3) <https://hraparak.am/post/dd8328af57a8fd6f973f36bbd2dcbad9>

Թեմային անդարդարձել էր «Պատիվ ունեմ» դաշինքի համակիր Արթուր Թովմասյանը: Վերջինս հունիսի 2-ին ֆեյսբուքյան իր էջում գրել էր. «Կապիտուլյանտը, այս դրոշը ֆռացնելով Զանրապետության հրապարակում, խնդրում է LGBT համայնքին ընտրություններում իրեն սատարել: Վայ Յայ ժողովրդդ դու էս ուր հասար....

Յ.Գ., թե բա երեխաների պաշտպանության օրն ենք նշում, առը հա թե....(4)

Գրառմանը կից Թովմասյանը երկու լուսանկար էր տեղադրել. մեկը՝ հունիսի 1-ի համերգից, մյուսը՝ ԼԳԲՏ համայնքի դրոշը:



Այդ համեմատությունից տպավորություն է ստեղծվում, թե երեխաներին նվիրված համերգի ժամանակ բեմում իսկապես բազմազանության դրոշն է ցուցադրվել:

Թովմասյանի գրառումը տարածեցին մի շարք լրատվական կայքեր՝ [blog.168.am](http://blog.168.am), [hayeli.am](http://hayeli.am), [livenews.am](http://livenews.am) և այլք, այդ մասին եղան հրապարակումներ նաև ֆեյսբուքի խմբերում: Սա առաջին դեպքը չէ, երբ Արթուր Թովմասյանը մեղադրում է գործող իշխանությանը ԼԳԲՏ քարոզ իրականացնելու համար: 2019թ.-ին օրինակ, նա կանխատեսում էր, որ Երևանում շուտով, ինչպես ինքն է ասում, «գեյ պառադ» կանցկացվի, քանի որ Փաշինյանի կառավարությունը տրանսգենդեր անձի ընդունելություն է կազմակերպել, սեռափոխված մարդու մասին ֆիլմը ֆինանսավորել (5).

(4) <https://iravunk.com/?p=204832&l=am>  
(5) <https://www.yerkir.am/news/view/185811.html>

Մարտիմեկյան դեպքերի 13-րդ տարելիցի կապակցությամբ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ իրականացվելու է հանրահավաք և երթ:

2021թ-ի մարտի 1-ին մի քանի ՋԼՄ-ներ՝ info.most.am, arminsayder և այլն, շրջանառեցին տեղեկություններ, թե իբր ԶԶ ԱԺ անկախ պատգամավոր Արման Բաբաջանյանը իշխանությանը խոստացել է, որ հանրահավաքին կբերի 2000 «համասեռամուլ» և, որ Փաշինյանը խոստացել է օրինականացնել «համասեռամուլների» ամուսնությունը:



2021թ-ի հուլիսի 14-ին «Իրավունք» թերթը տարածեց հետևյալ տեղեկությունը «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՉԿ հիմնադիր և համանախագահ Լարա Ահարոնյանի հետ, որն առավել հայտնի է ԶԶ-ում որպես ԼԳԲՏ համայնքի կարկառուն պաշտպան, հաճախակի հանդիպումներ է ունենում ՍԴ դատավոր Վահե Գրիգորյանը: Ահարոնյանն ու Վահե Գրիգորյանը բավականին մտերիմ են: Բանն այն է, որ այս երկուսը գիշերները նոր ծրագրեր են կազմում կապված ԼԳԲՏ համայնքի հետ:

Ահարոնյան-Գրիգորյան դուետի ծրագրի հիմքում Չայաստանում ԼԳԲՏ շքերթ իրականացնելն է» (6):

(6) <https://www.24news.am/news/184115>

Սկսած 1990թ.-ից ամեն տարի մայիսի 17-ն աշխարհում նշվում է որպես հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օր և մի շարք կազմակերպություններ, միջազգային և դիվանագիտական կառույցներ անդրադարձ են կատարում օրվան՝ բնակչության ուշադրությունը ԼԳԲՏ մարդկանց հիմնախնդիրների վրա կենտրոնացնելու նպատակով: «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նույնպես յուրաքանչյուր տարի անդրադարձ է կատարում օրվա խորհրդին և կազմակերպում միջոցառումներ՝ ակցիաների, քննարկումների և ասուլիսների տեսքով՝ ԼԳԲՏԻ մարդկանց հիմնախնդիրների վրա հանրային ուշադրություն հրավիրելու նպատակով:



«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նույնպես յուրաքանչյուր տարի անդրադարձ է կատարում օրվա խորհրդին և կազմակերպում միջոցառումներ՝ ակցիաների, քննարկումների և ասուլիսների տեսքով՝ ԼԳԲՏԻ մարդկանց հիմնախնդիրների վրա հանրային ուշադրություն հրավիրելու նպատակով: Այս տարի կազմակերպությունը կազմակերպել էր կոնֆերանս՝ Հայաստանում ԼԳԲՏԻ համայնքի հիմնախնդիրների ներկայացման և քննարկման համար:

Կոնֆերանսին մասնակցում էին մի շարք դիվանագիտական առաքելությունների, միջազգային և տեղական կազմակերպությունների, շահառու խմբերի ներկայացուցիչներ: Միջոցառմանը և օրվան դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ անդրադարձ էին կատարել նաև իրենց պաշտոնական սոցիալական էջերում, ինչը կրկին առիթ է հանդիսացել ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դրսևորման և ատելության խոսքի:



**U.S. Embassy Yerevan** Մայիսի 17 · Գ

Այսօր Հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի և բիֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրն է, և այդ առիթով Հայաստանում ԱՄՆ դեսպանությունն ընդգծում է հանդուրժողականության ու բազմազանության խթանման, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության հարցերում շարունակաբար աջակցելու իր պատրաստակամությունը: Փետրվարի 4-ին Նախագահ Բայդենը ԱՄՆ պետական գերատեսչություններին հրահանգեց «հետամուտ լինել խտրականության ու բռնության վերացմանը»: Նախագահական հուշագրում նշված էր. «Բոլոր մարդկանց հան... **Տեսնել ավելին**

457 215 մեկնաբանություն 20 կիսում

Հավանել Մեկնաբանել Կիսվել

**Varduhi Baloyan**  
Հայաֆոբիայի օր նշելու Է՞ք, ազերներին յուշեք քնած հայ չզխատեն, ծեր կանանց ականջ չկտրեն ..... մենք էլ ենք մարդ, մի քիչ լսեք

Հավանել · Պատասխանել · 222 · Խմբագրված է

**Per Sona**  
Իսկ կլինի տրանս-լեզբիա-գեյա-ու մնացած ֆոբիաները վերցնեք ու գնաք ասենք.... ԳՐՈՂԻ ԾՈՅԸ

Հավանել · Պատասխանել · 222

**Karen Hamazaspyan**

Հավանել · Պատասխանել · 222

**Armen Galustian**  
Պիզզեց ա: Հայաստանի օգնեք, ոչ թե պիղոռասների: KHAYTARAK!

Հավանել · Պատասխանել · 212

**Vahagn Petrosyan**  
Իսկ հասարակ մարդկանց պաշտպանության օրը երբ է??? պետք ա անպայման լինես տրանս, գոմիկ կամ պեդոֆիլ, որ պաշտպանված լինես? իրանք այսօր ամենաազատն են ու պաշտպանվածը...

Հավանել · Պատասխանել · 222

2 պատասխան

**Fenya Aghabekyan**  
Հեռու մեր երկրից, գնացեք ծեր այլասերված մայրցամաքում ինչ աղտեղություն անում եք արեք:

Հավանել · Պատասխանել · 222

**Mariam Movsesyan**  
ԵՏ ՖՈՐԸՆԵՐԻ ՀԱՄԱՐ հանդուրժողականություն ցուցաբերեք՝ վիզան խփեք տարեք ձեզ մոտ

Հավանել · Պատասխանել · 222

**Karen Petrosyan**  
Normal mard linely ci xraxysvym

Հավանել · Պատասխանել · 222

**Antony Artoonian**  
Ara ed inch hayastana? Tapek grag dvek ed bozerin

Հավանել · Պատասխանել · 212

**Vardoui Nazarian**

Հավանել · Պատասխանել · 222

**Գոհար Տրբաշյան**  
ՄԵԾԱԳՈՒԹՅՆ ՍԻՍԱԼ ԳԱՂԱՓԱՐԻ ՎՐԱ Է հիմնված է այս երևույթի հանդեպ որոշ մարդկանց հանդուրժողականության դրսևորումը:  
"Ոչ մեկ հասարակության կողմից չպետք է հալածվի իր սեռական կողմնորոշման համար, որը իրեն ի ծնե է տրված:"

ՀՄՏԱԿ է, որ ոչ մեկը լզբու ԳԻ ԾՆՎՈՒՄ: Մարդիկ ծնվում են կամ տղա (XY քրոմոսոմներով) կամ աղջիկ (XX քրոմոսոմներով): Անձի սեռական կողմնորոշումը այլասերությամբ/դաստիարակությամբ/սեռական բռնության երթարկվելով է ձևավորվում:  
Երեխաներին իրենց բնական ուղուց շեղողները ամենասաստիկ պատժի պետք է ենթարկվեն:

Հավանել · Պատասխանել · 212 · Խմբագրված է



## ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ԵՎ ՆՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՏԱՐԱԾՈՂ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Սույն բաժնում ներկայացված են 2020-ի ընթացքում ատելություն սերմանող և նման նյութեր տարածող զանգվածային լրատվության միջոցները:





## ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սույն բաժնում ներկայացված են ատելության խոսքի վերաբերյալ ներպետական և միջազգային համակարգում առկա սահմանումները, ինչպես նաև ներպետական իրավական կարգավորումները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լավագույն պահպանումը կախված է մի կողմից քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և մյուս կողմից մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից: ՀՀ-ն՝ որպես միջազգային հանրության անդամ, Սահմանադրությամբ ստանձնել է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պոզիտիվ պարտականությունը: 2005 թվականի ՀՀ Սահմանադրությամբ առաջին անգամ հավասարության վերաբերյալ դրույթն ամրապնդվեց խտրականության արգելքի վերաբերյալ իմպերատիվ պահանջով: Սակայն այն բավարար չէ որոշակի խմբի անձանց խտրականությունից, ինչպես նաև ատելության խոսքից պաշտպանելու համար:

ՀՀ ներպետական օրենսդրությամբ խտրականության չենթարկվելու հիմնարար իրավունքն ամրագրված է Սահմանադրության 29-րդ հոդվածով, որի համաձայն արգելվում է խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, տարիքից, գույքային վիճակից, լեզվից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, կրոնից, և այլն: Նյութական հիմքերի թվարկումն ավարտվում է «կանմ անձնական, կանմ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից» ընդգրկուն արտահայտությամբ: Հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրության նշված հոդվածը չի ներառում այնպիսի պաշտպանված հիմքեր, ինչպիսիք են սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, վերոհիշյալ ընդգրկուն ձևակերպումը կարող է ներառել այդ հիմքերը, մասնավորապես՝ օրենքներում դրանց արտացոլումը հնարավոր դարձնելու տեսանկյունից: Սակայն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ուղղակիորեն որպես ինքնուրույն հիմքեր չսահմանելը կարող է բացասական հետևանքների հանգեցնել ԼԳԲՏ անձանց հանդեպ խտրականության դեպքերի քննության ժամանակ:





Վեյդելանդը և այլք ընդդեմ Շվեդիայի գործով (2012 թվական) ՄԻԵԴ-ը նշել է, որ սեռական կողմնորոշումը պետք է պաշտպանվի ատելության խոսքի օրենսդրությամբ, քանի որ հոմոֆոբ խոսքը նույնքան ծանր է, որքան ռասիստական խոսքը: (7)

ՀՀ ներպետական օրենսդրությամբ բացակայում է նաև խտրականության բացառման վերաբերյալ համապարփակ օրենսդրություն: Դեռևս 2018թ. - ից շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը, որը դեռ չի ընդունվել: Սա ՀՀ օրենսդրության մեջ առկա գլխավոր բացերից է, որն էապես թուլացնում է ատելության խոսքի իրավական պաշտպանության մեխանիզմները:

Ինչ վերաբերում է ատելության խոսքին, ապա դրա վերաբերյալ որևէ հստակ սահմանում չկա ո՛չ ներպետական, ո՛չ էլ միջազգային մակարդակում: Միջազգային մի շարք իրավական փաստաթղթեր ընդհանրական եզրույթներով պետություններին ուղղորդումներ են տալիս օրենսդրորեն արգելելու խոսքի որոշակի տեսակներ: Օրինակ՝ Եվրոպայի խորհուրդի նախարարների կոմիտեի՝ Ատելության խոսքի վերաբերյալ 1997 թվականի հանձնարարականով փորձ է արվել առաջին անգամ ներկայացնել ատելության խոսքի սահմանումը.

**«Արտահայտվելու բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևեր, ներառյալ՝ անհանդուրժողականությունը արտահայտված ազգային փոքրամասնությունների, միգրանտների և ներգաղթյալ ծագում ունեցող անձանց դեմ ագրեսիվ ազգայնամոլությամբ և էթնոցենտրիզմով, խտրականությամբ և թշնամանքով» (8), (9):**

Այն ցույց է տալիս, որ ատելության խոսքն ընդգրկում է ավելին, քան ատելության արտահայտումը: Եվրոպական երկրների մեծ մասը, այդ թվում՝ Հայաստանը, ընդունում են պաշտպանվող հատկանիշների ավելի լայն շարք (10), քան վերոնշյալ սահմանմամբ է ներառված:

Միջազգային կազմակերպություններից հաջորդը ՄԱԿ-ն է, որն ատելության խոսքի վերաբերյալ իր գործողությունների ծրագրում տվել է ատելության խոսքի ընդհանուր սահմանումը.

(8) Ատելության խոսքի վերաբերյալ նախարարների կոմիտեի ԹԻՎ R (97) 20 հանձնարարական անդամ պետություններին

(9) Տե՛ս նաև ատելության խոսքի սահմանումը, որը նշված է ՌԱԵԴ-ի ԹԻՎ 15 ԸԶԳ-ի ներածական մասում

(10) <https://www.arlis.am/>

(11) <https://www.un.org/en/genocideprevention/documents/UN%20Strategy%20and%20Plan%20of%20Action%20on%20Hate%20Speech%2018%20June%20SYNOPSIS.pdf>



«Խոսքի միջոցով, գրավոր կամ վարքագծի միջոցով հաղորդակցման ցանկացած տեսակ, որը հարձակողական բնույթ է կրում կամ օգտագործում է նվաստացուցիչ կամ խտրական խոսք՝ ուղղված անձին կամ խմբին՝ այն բանի հիման վրա, թե ովքեր են նրանք, այլ կերպ ասած՝ նրանց կրոնի, էթնիկական պատկանելության, ազգության, ռասայի, մաշկի գույնի, ծագման, սեռի կամ ինքնության այլ գործոնի հիման վրա»(11)

Այս ընդհանուր սահմանումն ավելի լայն է, քան Եվրոպայի խորհուրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը և կարող է ներառել խոսքի բոլոր տեսակները, որոնք, լինելով վիրավորական և վնասակար, միաժամանակ պարտադիր չէ, որ համարվեն խոսքի այնպիսի տեսակ, որը պետք է օրենքով արգելվի:

Ներպետական օրենսդրությամբ ատելության խոսքը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով, որի համաձայն արգելվում են ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները:

Արարքի վտանգավորությունը ծանրանում է, եթե այն կատարվում է, ի թիվս այլնի, հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով:

2020 թվականի ապրիլ ամսին քրեական օրենսգիրքը լրացվել է 226.2-րդ հոդվածով, որով արգելվում են անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, այդ թվում՝ նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը:

Ինչ վերաբերում է քաղաքացիական օրենսդրությանը, ապա այնտեղ բացակայում է ատելության խոսքի վերաբերյալ որևէ նորմ: Թեև քաղաքացիական օրենսգրքում սահմանված են վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ նորմեր, դրանք ուղղակիորեն չեն ներառում



ատելության խոսքը: Այսինքն՝ եթե քաղաքացիական բնույթի վեճը ներառում է ատելության խոսք, դատարան ներկայացվող հայցապահանջը ձևակերպվում է վիրավորանքի կամ զրպարտության հիմքերով:

Թեպետ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով է ամրագրվում կարծիքի արտահայտման ազատությունը, սակայն այն բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Քաղաքացիական և վարչական օրենսդրության մեջ ատելության խոսքի կառուցակարգի բացակայության հետևանքով մի շարք մասնագիտական միավորումներ փորձել են ինքնակարգավորվել՝ ատելության խոսքն իրենց գործունեության կոնկրետ բնագավառում արգելելու նպատակով:

Օրինակ՝ 47 զանգվածային լրատվության միջոցներ համատեղ ընդունել են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը (Կանոնագիր): Կանոնագրով նախատեսվում են դրույթներ՝ ռասայի, տարիքի, կրոնական, ազգային պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների և այլնի պատճառով մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքն արգելելու (5.1 հոդված), ազգային կամ կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն քարոզելու կամ քաղաքական, սոցիալական, սեռական հատկանիշներով պայմանավորված խտրականությունը կամ ատելության խոսքը բացառելու (5.2 հոդված) և բռնություն, պատերազմ, ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հերքում քարոզելն արգելելու վերաբերյալ (12):

Առցանց հարթակի վերաբերյալ ներպետական համակարգում կան որոշակի կարգավորումներ, սակայն այդ ոլորտում նույնպես մի շարք խնդիրներ կան: Օրինակ՝ համաձայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի՝ Կարգավորողն իրավասու է կասեցնել ինտերնետային ծառայություններ մատուցողի կամ այլ ինտերնետային օպերատորի լիցենզիան կամ լիցենզիայի դադարեցման համար դիմել

(12) [https://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics\\_arm.pdf](https://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf)

դատարան, եթե կասեցումը կամ դադարեցումն անհրաժեշտ է «ազգային անվտանգության կամ հանրային շահի նկատառումներով»:

Օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ օպերատորը կամ ծառայություններ մատուցողը, որը գիտակցաբար թույլ է տալիս, որ իր ցանցը կամ ծառայություններն օգտագործվեն որևէ անձի կողմից այլ անձանց նկատմամբ բռնություն, սպառնալիքներ կամ չարամտություն կիրառելու նպատակով, ենթարկվում է պատասխանատվության: Այս հոդվածներն իրենց ներկա ձևակերպմամբ թերևս չափազանց լայն և երկակի իմաստ ունեն և, անկասկած, չեն բավարարում իրավական որոշակիության պահանջը:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խտրականության դեմ օրենքի և հաշվետվողականության մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև ներկայումս օրենքներում առկա թերությունները մեծապես նպաստում են ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարմանը, ինչն էլ ԼԳԲՏ անձանց դարձնում է առավել խոցելի:

ԼԳԲՏի անձինք հաճախ ատելության խոսքի թիրախ են դառնում ոչ միայն ծայրահեղ ազգայնական խմբավորումների, այլ նաև հանրային գործիչների և այլ պաշտոնյաների կողմից: Ոմանք էլ ավելի են սրում իրավիճակը: Այդ ամենը ներկայացված է նաև ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի կողմից հրապարակված «Մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում 2020թ-ին» զեկույցում [\(13\)](#):

2021թ-ին տեղի ունեցող իրադարձությունները փաստում են, որ հակա-ԼԳԲՏ տրամադրությունները և կոչերը սրվում էին միայն քաղաքական գործընթացների ակտիվացման շրջանում քաղաքական նպատակներով: Բազմաթիվ քաղաքական և հասարակական գործիչներ, հատկապես նախորդ իշխանության աջակիցները, օգտագործում էին հակա-ԼԳԲՏ հռետորաբանությունը՝ հաճախ ԼԳԲՏ անձանց ներկայացնելով որպես «ազգային անվտանգության սպառնալիք» բնակչությանը գործող իշխանության դեմ տրամադրելու նպատակով:

(13) [https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2021\\_arm.pdf](https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2021_arm.pdf)

Ատելության նման դրսևորումները յուրաքանչյուր անգամ հակադարձության սահմաններ են պայմանավորում կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի չափավոր կիրարկման տեսանկյունից և, այդ իմաստով, սահմանվում են որպես «ատելության խոսք»:

Ատելության խոսքի դեմ օրենքի բացակայությունը թույլ է տալիս հանրային գործիչներին և զանգվածային լրատվամիջոցներին խթանել ատելությունը՝ խոսքի ազատության ենթատեքստում: Չնայած նրան, որ ատելության խոսքն իրենց գործունեության կոնկրետ բնագավառում արգելելու նպատակով 47 ՁԼՄ-ներ համատեղ ընդունել են որոշակի կանոններ, սակայն պետական մակարդակով կառավարությունը որևէ գործողություն չի ձեռնարկում ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքը նվազեցնելու և նրանց իրավունքները պաշտպանելու համար:

2021թ-ին առցանց տիրույթում տեղի ունեցած իրադարձություններն ու դրանց հետևանքների անպատժելիությունը կարելի է պայմանավորել ոչ միայն հասարակության մեջ ամրապնդված խտրական վերաբերմունքով, այլև ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների և մի շարք այլ ոլորտներում օրենսդրական բացերով:


Դեռևս 2017թ-ին շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության «Կիբերանվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» արձանագրային որոշման նախագիծը: Սակայն այն մինչ օրս չի ընդունվել:


Այսպիսով՝ համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում հետագա տարիներին հնարավոր կլինի խուսափել մի շարք խնդիրներից, կանխել առցանց տիրույթում դրսևորվող խտրականությունը, ատելության կոչերը և սպառնալիքները, իսկ դրանց դրսևորման դեպքում դրանց տալ համարժեք իրավական գնահատական:



## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1** ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում որպես խտրականությունն արգելող դրույթ ընդգրկել սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը:
- 2** ՀՀ վարչական և քաղաքացիական օրենսգրքերում կատարել փոփոխություններ և ատելության խոսքի վերաբերյալ կարգավորումներ ներառել:
- 3** Ընդունել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքը միջազգային չափանիշներին համապատասխան:
- 4** Քրեականացնել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ թշնամանք սերմանելը:
- 5** Ապահովել միջազգային կառույցների կողմից ՀՀ-ին տրված հանձնարարականների լիարժեք կիրարկումը:





 **NewGenerationNGO@gmail.com**  
**www.ngngo.net**

 **+374 60478989**  
**+374 55478980**

© 2022. The report was published by NEW GENERATION HUMANITARIAN NGO.

© 2022. Designed by NEW GENERATION HUMANITARIAN NGO.